



Australian Government

Department of Health

Նոր միջոց՝ COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար

COVIDSafe ծրագիրը նոր միջոց է՝ թեստավորման, պատշաճ հիգիենայի և սոցիալական հեռավորության հետ մեկտեղ, օգնելու դանդաղեցնել կորոնավիրուսի տարածումը Ավստրալիայում:

COVIDSafe ծրագիրը բացառապես առողջության մասին է: Այն կօգնի ավստրալացիներին անվտանգ պահել՝ արագացնելով կորոնավիրուսով վարակված որևէ մեկի հետ շփման մեջ գտնվող մարդկանց տեղեկացնելու գործընթացը: Նահանգային և տարածքային առողջապահության պաշտոնյաները կկապվեն ձեզ հետ, եթե դուք հնարավոր է ազդեցության ենթարկվել եք և ձեզ կտեղեկացնեն.

- ինչի նկատմամբ ուշադիր լինեք
- արդյոք պետք է մեկուսանաք
- ինչպես, երբ և որտեղ թեստավորում անցնեք, և
- ինչպես պաշտպանեք ձեզ և ձեր ընտանիքը:

Ծրագիրը կամավոր է և անվճար: Դուք կարող եք ներբեռնել COVIDSafe-ը ձեր ծրագրի կրպակից (app stores): Ձեզ կառաջարկվի մուտքագրել անուն, հեռախոսի համար, փոստային կոդ և տարիքային սահման: Այս տեղեկատվությունը վերբեռնվում է շատ անվտանգ տվյալների պահպանման համակարգում և օգտագործվում է հղման կոդ ստեղծելու համար:

Ծրագիրը գործում է ձեր հեռախոսի ետին ֆոնի վրա, մինչ դուք ձեր առօրյա գործերով եք զբաղվում: Այն օգտագործում է Bluetooth՝ ծրագրի այլ օգտագործողներ գտնելու համար: Այն ապահով կերպով մուտքագրում է ծրագրի այն օգտագործողների հղման կոդերը, որոնց հետ դուք շփվում եք, ինչպես նաև շփման ամսաթիվը, ժամանակը, հեռավորությունը և տևողությունը:

Այն չի գրանցում գտնվելու վայրը:

Այս կապի տեղեկատվությունը ծածկագրված է և պահվում է ձեր հեռախոսի ծրագրում: Նույնիսկ դուք չեք կարող այն մուտք գործել:

Կապի տեղեկատվությունը պահվում են ծրագրում միայն 21 օրվա ընթացքում: Այս ժամանակահատվածը թույլ է տալիս վիրուսի առավելագույն 14 օրվա թաքնված շրջանը, և այն ժամանակը, որը տևում է հաստատելու թեստի դրական արդյունք: Ծրագրում պահված 21 օրվանից ավելի հին տեղեկատվությունը ինքնաբերաբար ջնջվում է:

Եթե դուք ախտորոշվել եք COVID-19-ով, նահանգային և տարածքային առողջապահության պաշտոնյաները ձեզ կխնդրեն տեղեկատվություն տրամադրել յուրաքանչյուր անձի մասին, ում հետ դուք վերջերս շփման մեջ եք եղել: Դուք կարող եք նրանց թույլ տալ մուտք գործել ծրագրի կողմից գրանցված տեղեկատվությունը այն անձանց վերաբերյալ, ում հետ դուք մոտիկ շփման մեջ եք եղել – 1.5 մետրի սահմաններում 15 րոպե և ավելի:

Ներկայումս մարդկանց գտնելը, ովքեր հնարավոր է ենթարկվել են վիրուսին, ապավինում է այն մարդկանց վրա, ովքեր կարող են հիշել, թե ում հետ են շփվել և գիտեն նրանց կապի տվյալները: COVIDSafe-ը այս գործընթացը դարձնում է առավել արագ և ճշգրիտ:

Ծրագրի տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն նահանգային և տարածքային առողջապահության մարմինների կողմից, և միայն օգնելու՝ տեղեկացնել մարդկանց, ովքեր շփման մեջ են եղել կորոնավիրուսով վարակված որևէ մեկի հետ: Ծրագրի տվյալները ցանկացած այլ եղանակով օգտագործելը քրեական հանցանք է համարվում:

Դուք կարող եք ցանկացած ժամանակ ջնջել ծրագիրը և դրա տեղեկատվությունը ձեր հեռախոսից:

Երբ համաճարակը ավարտվի Ավստրալիայում, օգտագործողներին կառաջարկվի ջնջել COVIDSafe ծրագիրը իրենց հեռախոսներից: Մա կջնջի ծրագրի ամբողջ տեղեկատվությունը անձի հեռախոսի մեջ: Տեղեկատվության պահպանման համակարգում տեղեկատվությունը նույնպես կոչնչացվի համաճարակի ավարտից հետո:

Ծրագրի օգտագործումը կօգնի կառավարություններին ավելի արագ գործել՝ սահմանափակումները նվազեցնելու համար, քան այլ կերպ հնարավոր կլիներ:

Կորոնավիրուսի և COVIDSafe ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկատվության համար, այցելեք՝ www.health.gov.au: